

**«Երիտասարդ ընտանիքի դժվարությունները ազատ ժամանցի կազմակերպման գործում» ՀՀ մարզերում
(Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի օրինակով)**

Մարկոսյան Մարիամ Մ.

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման
բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ (Երևան, ՀՀ)
markosyanmari@mail.ru*

ՀՏԳ 316.36 - ընտանիքի և ամուսնության սոցիոլոգիա

Հանգուցաբառեր՝ ընտանիք, երիտասարդություն, ազատ ժամանակ, ժամանց, հորրի, արժեքային համակարգ, արժեքային կողմնորոշում, սոցիալական ինտեգրում, գրքալացում:

**Проблемы организации досуга для молодых семей в областях Армении
(На примере Лорийской, Ширакской и Тавушской области)**

Маркосян Мариам М.

*Соискатель Института философии, социологии и права НАН РА,
Инспектор отдела организации и контроля учебного процесса,
образовательного комплекса полиции РА, лейтенант полиции (Ереван, РА)
markosyanmari@mail.ru*

Аннотация: Организация досуга является одним из важных средств развития личности. Это также оказывает непосредственное влияние на активность и рабочую деятельность, так как в свободное время процессы восстановления более эффективны, они снимают физическое и психическое напряжение.

Социальный образ молодежи отражается как на поведении, так и на их предпочтениях. И государство, и молодежь должны быть интерактивно вовлечены в этот процесс с чувством ответственности и серьезности. В статье автор рассматривает виды организации свободного времени и трудности в областях армении. Сейчас молодые семьи нуждаются в финансовой поддержке проектов, которые будут отвечать за создание развлекательных заведений.

Ключевые слова: семья, молодежь, досуг, развлечения, хобби, система ценностей, ценностная ориентация, социальная интеграция, глобализация.

**Difficulties to Arrange Leisure for Young Families in the Regions of the Republic of Armenia
(Example of Lori, Shirak and Tavush Marzes)**

Markosyan Mariam M.

*The applicant of the institute of Philosophy Sociology and Law of the National Academy of Sciences of RA,
inspector of the division of Arrangement and Supervision of educational process of Educational Complex of
Police of RA, police lieutenant (Yerevan, RA)
markosyanmari@mail.ru*

Abstract: Leisure is one of the most important ways for a personality development. It also has a direct impact on activity and labor, as recovery process is more efficient during leisure, they remove physical and psychological pressure. Social image of youth is reflected as in their behavior as in their preferences. State as well as youth must be integrated actively into this process with the feeling of responsibility and seriousness. The author analyzes actively types of arrangement of leisure. Now communities need in financial support projects, which must be responsible for creating entertainment institutions.

Key words: family, youth, leisure, entertainment, hobby, system of values, orientation within values, social integration, globalization.

Ազատ ժամանակը պետք է ուղղված լինի անձի բազմակողմանի զարգացմանը և նպաստի սեփական ակտիվ գործունեության ծավալմանը: Ազատ ժամանակի ոչ օպտիմալ կազմակերպումը իր բացասական ազդեցությունն է թողնում անձի զարգացման վրա: Մի կողմից առկա է ժամա-

նակի անտեղի վատնում, իսկ մյուս կողմից՝ չի ապահովում անձի զարգացում:

Կոնկրետ 18-30 տ. երիտասարդ ընտանիքներին առանձնացնելը նպատակ է հետապնդում ցույց տալ նրանց՝ որպես հասարակության լիարժեք անդամ, ինչպես նաև հասարակության

գարգացման հիմնական ուժ լինելը Բացի դրանից բացահայտել, թե ինչ դեր ունի ազատ ժամանակը երիտասարդի սոցիալ-մշակութային արժեքների պահպանման գործում: Երիտասարդ ընտանիք՝ ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը երիտասարդ է, կամ երեխա ունեցող միայնակ ծնող, որի տարիքը չի գերազանցում 30-ը (ներառյալ) [1]:

Թեման լուսաբանելու համար անհրաժեշտ է դառնում պարզաբանել հետևյալ հասկացությունները և հարցերը.

1. «Ազատ ժամանակ» և «ազատ ժամանց» հասկացությունների տարբերակումը (ընկալումը երիտասարդության կողմից),
2. Ազատ ժամանակը օպտիմալ կազմակերպելու միջոցառումների անհրաժեշտությունը,
3. Ժամանցի՝ որպես ազատ ժամանակի բաղկացուցիչ մասի նշանակությունը:

Այս ամենը մեզ հնարավորություն կտա, պարզել, թե այսօր երիտասարդ ընտանիքները ի՞նչ նախասիրություններ ունեն և, ի վերջո, ի՞նչ հնարավորություններ, դժվարություններ ազատ ժամանցը կազմակերպելու համար: Գաղտնիք չէ, որ ամուսինների փոխհարաբերությունների կարգավորման գործում դրական ազդեցություն է ունենում ամուսինների համատեղ ժամանակի տնօրինումը, հորբիների կազմակերպումը: Հնուց ի վեր ժամանցը դիտարկվել է որպես տարբեր տեսակի պահանջումների, այդ թվում՝ մշակութային բավարարման ձև [2, էջ 54]:

Ժամանցը, լինելով ազատ ժամանակ ֆիզիկական, հոգևոր, սոցիալական պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեության ձևերի ամբողջություն, իրականացնում է այնպիսի կարևոր գործառնություններ, ինչպիսիք են հանգիստը, ծախված ֆիզիկական և մտավոր ուժերի և ունակությունների զարգացումը, զվարճանքն ու շփումը: Այլ կերպ ասած, ազատ ժամանակի ընթացքում հնարավոր է սեփական Ես-ի, ներքին ազատության զգալի իրացում: Ժամանակն իրապես ազատ է այն դեպքում, երբ թույլ է տալիս անձին՝ մտածելու և ստեղծելու իր անհատականության համաձայն, այլ ոչ թե արտաքին անհրաժեշտությունից ելնելով [3, էջ 17]: Քանի որ ժամանցը մարդու գործունեություն է, ապա այն չի կարելի համարել ժամանակի դատարկ անցկացում, պարզ անգործություն «ինչ ուզում եմ, այն էլ անում եմ» սկզբունքով: Դա գործունեություն է, որը իրականացվում է մարդու կողմից նախապես որոշված կարիքների, շահերի և նպատակների շրջանակներում:

Ինչ վերաբերում է ազատ ժամանակին, ապա մասնագիտական գրականության վերլուծությունը հնարավորություն է տալիս դրա կառուցվածքում առանձնացնել՝

1. Ակտիվ ստեղծագործական գործունեություն,
2. Մշակութային պահանջումների բավարարում,
3. Սպորտ,
4. Սիրողական զբաղմունքներ,
5. Իտալեր,
6. Այլ մարդկանց հետ շփում [4, էջ 57]:

Սակայն մարդու ազատ ժամանակի կազմակերպման հնարավորությունները անսահմանափակ չեն: Եթե աշխատանքային գործունեության ծավալը դուրս է գալիս ողջամիտ սահմաններից, ապա մարդը խիստ սահմանափակում է իր ազատ ժամանակը, ինչը կարող է հանգեցնել գերհոգնածության, իսկ վերջինս էլ իր հերթին կարող է դառնալ սթրեսի պատճառ: Իսկ այս ամենը կարող է անդրադառնալ երիտասարդ ամուսինների բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Ազատ ժամանակը տանը պասիվ ձևով անցկացնող երիտասարդ զույգերի մոտ արգելակվում է նախաձեռնողականությունը և նրանց կենսակերպը դառնում է միաբնույթ: Առաջ են գալիս բախումներ, տարաձայնություններ, որոնք էլ պատճառ են դառնում տարատեսակ կոնֆլիկտների:

Ժամանակակից պայմաններում ազատ ժամանակը կարելի է դիտարկել որպես արժեք: Բնականաբար մարդիկ տարբեր արժեքային կողմնորոշումներ ունեն նաև ազատ ժամանակի հարցում:

Սոցիոլոգիական գրականության մեջ առանձնացվում են ազատ ժամանակի տարբեր դասակարգումներ [2, էջ 68]:

Մասնավորապես, ըստ պարբերականության առանձնացնում են ազատ ժամանակի հետևյալ տեսակները:

1. Ամենօրյա
2. Շաբաթական
3. Հանգստյան օրերին
4. Տոնական:

Ըստ վայրի առանձնացնում են ազատ ժամանակի հետևյալ տեսակները՝

1. Տնային
2. Արտատնային:

Ըստ կազմակերպման ձևի ազատ ժամանակը լինում է՝

1. Անհատապես կազմակերպված
2. Կոլեկտիվ կազմակերպված:

Ազատ ժամանակի բովանդակային մաս է նաև հորբին: Հորբին կարող է դրսևորվել նաև ինքնագործունեության մեջ, երբ օրինակ անձը զբաղվում է որսորդությամբ, սպորտով և այլն:

Ազատ ժամանակի դեպքում շեշտը դրվում է մի շարք գործոնների վրա, որոնք կրում են հոգևոր և նյութական բնույթ: Դա՝

1. Ինքնաիրացումը,
2. Հոգևոր զարգացումը,

3. Ինքնաարտահայտումը,
4. Արժանապատվության զգացումը,
5. Ինքնագնահատականի բարձրացումը,
6. Հանրությանը պատկանելիության զգացումը [2, էջ 74]:

Որպես ազատ ժամանցի կազմակերպման վրա ազդող գործոններ կարելի է առանձնացնել սոցիալ-տնտեսական պայմանները, աշխարհագրական դիրքը, ոչ ֆորմալ արժեքների ներմուծումը, ազատ ժամանակի օպտիմալ օգտագործելու գիտակցման բացակայությունը, երիտասարդության մոտիվացիան և ակտիվությունը:

Կարելի է հարց տալ՝ ինչու՞ առանձնացնել մարզային երիտասարդությունը, այն պետք է որ նույնը լինի ամեն տեղ նույն խնդիրներով, նույն հույզերով: Սա միայն առաջին հայացքից իրականում մարզային երիտասարդության խնդիրների թնջուկը ավելի ամուր է՝ լուծման հնարավոր տարբերակների սակավության, աջակցող կառույցների բացակայության, ազատ ժամանցի կազմակերպման գրեթե անհնարինության և այլ պատճառներով: Չեկույցի շրջանակներում իրականացված հարցմամբ փորձ է արվել պարզելու մարզային երիտասարդության հիմնական խնդիրները և ահա պատկերը.

- ✓ Գործազրկությունը/զբաղվածությունը - 55.0
- ✓ Սոցիալ-տնտեսական խնդիրները - 8.1
- ✓ Բնակարանային խնդիրները - 0.9
- ✓ Կրթությունը - 14.5
- ✓ Մշակութային խնդիրները (հանգիստ, ժամանց, սպորտ) - 15.1 [5]:

1. Սոցիալ-տնտեսական պայմանները:

Առաջին հայացքից թվում է, որ այս գործոնի ազդեցությունը ազատ ժամանցի կազմակերպման վրա այդքան էլ կարևոր չէ, սակայն իրականությունը այլ պատկեր է ցուցադրում: Այն ընտանիքները, մասնավորապես, մարզերում, ովքեր ավելի ցածր սոցիալ-տնտեսական պայմաններում են ապրում, նրանց ազատ ժամանակը ավելի պասիվ է և ոչ բովանդակալից: Այսինքն այն իմաստով, որ ուղղված չէ որևէ հիմնարար գործունեության կատարմանը և անձի զարգացմանը: Այս ամենն իր խոր հետևանքն է թողնում վերջիններիս հոգեկան աշխարհի վրա: Չկարողանալով բավարարել իրենց որոշակի նախասիրությունների հետ կապված պահանջմունքներ, նրանք ետ են զարգանում, դառնում մարզինալ այս կամ այն իրականության մեջ տեղի ունեցող երևույթների նկատմամբ [6, էջ 47]:

Ուսումնասիրելով ՀՀ մարզերում գրանցված ամուսնությունների թվի նվազման և ամուսնալուծությունների թվի մեծացման միտումը, կարելի է անել այն եզրահանգումը, որ կա

անհրաժեշտություն վերանայելու բոլոր վերոնշյալ բոլոր գործոնները:

Աղյուսակ 1. Գրանցված ամուսնությունները՝ 2005 - 2019 թթ. (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ամուսնության վերաբերյալ ակտերի գրանցումներ)

Մարզ	2005	2010	2015	2019
Լոռու	1424	1398	1270	1075
Ծիրակ	1297	1392	1278	970
Տավուշ	646	602	619	564

Աղյուսակ 2. Գրանցված ամուսնալուծությունները՝ 2005 - 2019 թթ. (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ամուսնության վերաբերյալ ակտերի գրանցումներ)

Մարզ	2005	2010	2015	2019
Լոռի	222	470	480	343
Ծիրակ	155	222	262	267
Տավուշ	57	69	62	92

Մեթոդական մաս

Քանակական հարցման մեթոդաբանությունը. Հետազոտական գործիքը՝ հարցաթերթիկը, պարունակում է փակ ու բաց հարցեր: Հետազոտությունը, որպեսզի լինի ներկայացուցչական, այսինքն՝ ընտրանքային համախմբությունը ներկայացնի գլխավոր համախմբությունը, անհրաժեշտ է դառնում, որպեսզի հետևենք պատահականության սկզբունքին:

Հետազոտությանը ներգրավված մասնակիցները ընտրվել են համաձայն հետևյալ չափորոշիչների.

1. Տարիքային խումբ - 18-30տ.
2. Սեռ – իգական/արական
3. Բնակության վայր (բնակչությամբ) [7]:
 - 240 ընտանիք՝ Լոռու մարզ, 18-30 տ.՝ 36.383;
 - 222 ընտանիք՝ Ծիրակի մարզ, 18-30 տ.՝ 41.517;
 - 194 ընտանիք՝ Տավուշի մարզ, 18-30 տ.՝ 20.098:

Հարցմանը մասնակցել են թվով՝ 656 ընտանիք:

Աղյուսակ 3. Ժամանցային վայր չայցելելու պատճառները.

Չեն հաճախում	Արտահայտված %-ով	
Ֆինանսական պատճառով	18-25 տ.	23%
	25-30 տ.	12%
	Ընդամենը՝	35%
Չկա կամ հեռու է	18-25 տ.	11%
	25-30 տ.	21%
	Ընդամենը՝	32%
Ազատ ժամանակ չկա	18 -25 տ.	9,5%
	25-30 տ.	6,5%
	Ընդամենը՝	16%
Սովորություն չկա	18-25 տ.	4%
	25-30 տ.	7%
	Ընդամենը՝	11%
Այլ պատճառ	Ընդամենը՝	6%


Հարցման արդյունքներից պարզ դարձավ նաև (աղյուսակ 3), որ ֆինանսական դժվարությունը (35%) կապված է հիմնականում երիտասարդ ամուսինների աշխատանք չունենալու կամ էլ ժամանցի կազմակերպման համար գումար չնախատեսելու հետ: Եվ այն դեպքում, երբ երիտասարդ ամուսինները իրենց ֆինանսական ծախսերը հոգում են՝

1. Մեփական ուժերով, աշխատանք տեղում - 22%
2. Արտագնա աշխատանքի միջոցով - 27%
3. Նպաստ, թոշակ և այլն - 17%
4. Ծնողների օգնություն - 34%

Երկրորդ կարևոր գործոնը, որը դժվարեցնում է երիտասարդ ընտանիքների ազատ ժամանցի կազմակերպումը, դա ժամանցային վայրերի բացակայությունն է կամ բնակավայրից հեռու լինելը (32%): Աշխատանքի գերծանրաբեռնվածությունից ելնելով ազատ ժամանակ չունեն, որպեսզի տրամադրեն ազատ ժամանցին (16%): Ինչ վերաբերվում է այլ պատճառներին (6%), հիմնականում կապված են երիտասարդների մտածելակերպի, ավագ սերնդի հետ ունեցած փոխհարաբերություններից:

Բացի սոցիալ-տնտեսական գործոնից և ազատ ժամանցի վայրի բացակայությունից, կարևոր նախապայման է նաև երիտասարդ ամուսինների սեփական նախաձեռնողականությունը այցելելու ազատ ժամանցի վայր: Ընդհանուր հարցվածներից 11%-ը, ինչպես երևում է (աղյուսակ 3-ում), կապված է հենց կոնկրետ երիտասարդի սեփական ցանկության բացակայության հետ: Որպես հավաստում, հարցաթերթում ընդգրկված էր նաև հարց այն մասին, թե որքան հաճախակի են հարցվածները ընտանիքով այցելում ժամանցի վայր:

Գծապատկեր 1. Ինչ հաճախականությամբ եք ընտանիքով այցելում ժամանցային վայր



Ըստ աղյուսակ 2-ի երևում է, որ մեծամասնությունը՝ 64% հազվադեպ է այցելում: Պատճառները կրկին նույնը՝ սոցիալական, ազատ ժամանակի սակավության, գերզբաղվածություն, ժամանցային վայրի բացակայության և այլն:

2. Աշխարհագրական դիրքը: Ազատ ժամանակի կազմակերպման հնարավորություն-

ները էականորեն տարբերվում են գյուղում և քաղաքում: Դա պայմանավորված է ազատ ժամանցի կազմակերպման համար նախատեսված վայրերի առկայությունից: Տարբերություն չկա, թե ինչ բնույթի վայր է գիտական (գրադարաններ), մշակութային (թատրոններ, կինո, պատկերասրահներ), ժամանցային (ակումբներ, կարսոկեններ, սրճարաններ) և այլն:

Մինչդեռ գյուղական համայնքներում այդ վերոնշյալ վայրերի սակավությունը կամ իսպառ բացակայությունը փոխում է ազատ ժամանցի որակը: Եթե Երևանում կան բազմաթիվ հասանելի տեղեկատվական աղբյուրներ, հաստատություններ, ապա մարզերում այս խնդիրը շատ ավելի լուրջ է: Նույնիսկ շատ համայնքներում հասարակ զբոսայգի չկա, որտեղ կարելի է զբոսնել: Այս պարագայում նրանք անիմաստ են համարում մշակութային կենտրոնների առկայության մասին: Ինչպես կրթություն ստանալու և աշխատանք գտնելու պարագայում, այնպես էլ մշակութային և ժամանցային վայրերը, կարծես թե, դարձել են մայրաքաղաքակենտրոն: Այսպիսով, երիտասարդների համար ազատ ժամանցի խնդիրը մնում է չլուծված Հայաստանի գրեթե բոլոր գյուղական համայնքներում և պահանջում է ոլորտը կարգավորող սուբյեկտների կողմից հետևողական քայլերի իրականացում:

3. Ոչ ֆորմալ արժեքների ներմուծումը: Գյուղը դարեր շարունակ եղել է ավանդույթների կրողն ու սերունդներին փոխանցողը: Այսօր առավել հրատապ է համագործակցության նոր ուղիների որոնումը: Գյուղափոխության պայմաններում առավել դժվարանում է երիտասարդներին ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելը: Դեռևս շարունակվում է հասարակության տարբեր շերտերում ընթացող փոփոխությունները՝ կապված նոր արժեքային համակարգերի ընկալման և հնի վերաարժևորման հետ:

Նոր ձևավորվող քաղաքացիական հասարակության համար կարևորվում է մի շարք միմյանց հետ փոխկապակցված գործոններ [8, էջ 15]:

1. Քաղաքական,
2. Սոցիալական,
3. Տնտեսական նոր համակարգերի ձևավորում,
4. Հոգևոր-մշակութային նոր արժեքների գիտակցումը և ընկալումը,
5. Կրթական, դատաիրավական համակարգերի բարեփոխումը,
6. Գյուղափոխության և այլն:

Ակնհայտ է, որ երիտասարդության շրջանում համամարդկային արժեքներն արդեն կարևոր դերակատարություն ունեն նրանց

հոգևոր արժեքային կողմնորոշումներում: Անհրաժեշտ է դառնում միջոցառումներ իրականացնել, որոնք կնպաստեն երիտասարդների ազգային արժեքային կողմնորոշումների զարգացմանը: Արժեքային համակարգի փոփոխությունները հանգեցնում են երիտասարդների մոտ նախասիրությունների խառնաշփոթի, երբ երիտասարդը ինքն էլ չի հասկանում ինչով է ուզում զբաղվել ազատ ժամանակ, ինչ է իրեն առհասարակ հետաքրքիր: Սա հարցվածների մեջ կազմում է 10%: (Աղյուսակ 3):

4. Ազատ ժամանակի օպտիմալ օգտագործելու գիտակցման բացակայությունը: Ժամանակի կարգավորումը ընդգրկում է ինչպես գործունեության ամբողջական նախագծումը, այնպես էլ նրա առանձին մասերի (տարբեր գործողությունների իրականացման հարմար պահի ընտրության, մի գործողությունից մյուսի անցման և այլնի) նախագծումը:

Սոցիալական ժամանակը մարդու առջև պահանջներ դնելով՝ կոնկրետ մատ-նանշում է, թե ինչ շրջանում նա պետք է տեղավորվի, որպեսզի սոցիալապես ետ չընկնի՝ հասցնի: Այն կարող է հանդես գալ, ինչպես ժամանակի առարկայի զարգացման ուժ, այնպես էլ որպես նրա արգելակ: Սոցիալական ժամանակին համապատասխանելու, ետ չմնալու, ժամանակին համընթաց քայլերու ցանկությունը և անհրաժեշտությունը այնպիսի ռազմավարություն են ստեղծում, որի դեպքում «ետ չմնալու փոխարեն» պետք է «մի փոքր առաջ լինել»: Ժամանակի ռացիոնալ կազմակերպման տեսանկյունից առանձնացվում են սեփական հետաքրքրություններին հետևելու համար ժամանակի սոցիալական չափորոշիչների ակտիվ հաշվարկը, երբ մարդն ենթարկվում է դրանց, իսկ իր նախագծերը այդպես էլ մնում են նախագիծ: Հասկանալու համար, թե որքան ազատ ժամանակ ունեն հարցվածները, կարծես թե, մեծամասնությունը նշեց հիմնականում կիրակի օրը՝ այն էլ ոչ լրիվ ազատ գրաֆիկով: Պարզ դարձավ, որ քչերը այդ գրաֆիկով կարող են նպատակային կազմակերպել իրենց հանգիստը և ժամանցը: Որպես զբաղվածություն աշխատանքից գատ, հարցվածները թվարկեցին՝ կենցաղային գործերով զբաղվելը, երեխաների, ծնողների խնամքը և այլն:

5. Երիտասարդության մոտիվացիան և ակտիվությունը: [9, էջ 47]:

Այս պարագայում մեծ է պետության դերը: Վերջինիս անքակտելի պարտականություններից են՝

1. Սահմանված օրենսդրական ակտերի կատարումը,
2. Ժամանցի տարբեր ձևերի կազմակերպումը,

3. Ազատ ժամանցի կազմակերպման հաստատությունների տրամադրումը:

Նյութական բարեկեցության մակարդակով պայմանավորված ազատ ժամանակի կազմակերպման ձևերի համակարգում փոքր տեսակարար կշիռ ունի զբոսաշրջությունը:

Ազատ ժամանակի կազմակերպման ձևերի մասին խոսելիս պետք է արձանագրել այն օրինաչափությունը, որ նյութական բարեկեցության մակարդակը ազդում է միայն զվարճանքի հաստատություններ հաճախելու քանակի վրա, իսկ այս կամ այն կոնկրետ ժամանցային հաստատության ընտրությունը կապված չէ նյութական բարեկեցության հետ [10, էջ 65]:

Հետազոտության նպատակներից էր վերհանել երիտասարդների խնդիրների լուծման հեռանկարները՝ ուսումնասիրելով երիտասարդների ընկալումներն ու տրամադրվածությունը իրավիճակի բարելավման վերաբերյալ, ինչպես նաև թե ինչ առաջարկություններ ունեն մարզերում երիտասարդ ընտանիքները ազատ ժամանցի կազմակերպման հարցում, որպեսզի իրենց առօրյան ավելի հագեցած և հետաքրքիր դառնա: Գյումրիում և Վանաձորում, որոշ չափով կարելի է տեսնել ժամանցային վայրեր, խընդիրը այստեղ երիտասարդները ավելի շատ նյութականի հետ են կապում: Կան տեսարժան և մշակութային վայրեր, բազմադարյան վանքեր, եկեղեցիներ, տուն-թանգարաններ, պուրակներ և այլն: Այս ամենը դիտարկելի է զբոսաշրջության տեսանկյունից: Մինչդեռ Մայիտակ և Իջևան քաղաքներում, կարծես թե, մատների վրա կարելի է հաշվել ժամանցային վայրերը: Մայիտակցիները, որպես աղետի գոտի ունեն ավելի մեծ սպասելիքներ: Ընտանիքով ժամանցային վայր հաճախելու և ոչ մի հաստատության անուն չնշեցին, իսկ մեծ ցանկության դեպքում ստիպված գնում են օրինակ Վանաձոր կամ Երևան: Իսկ դա նյութականի առումով մեծ դժվարություններ է առաջ բերում: Լավագույն ուրախությունը, որ կարելի է համարել իրենց երեխաների համար, զբոսայգում նոր ժամանակակից մանկական խաղահրապարակի կառուցումն է եղել:

Հետազոտության կարևոր խնդիրներից էր բացահայտել, թե բացի նյութական գործոնից և ժամանցի կազմակերպման վայրերի սակավությունից ինչ այլ դժվարությունների հետ է կապված ազատ ժամանցի կազմակերպումը: Հարցման արդյունքներով երիտասարդներից շատերը ուղղակի նախատրամադրվածություն չունեն: Առօրեա կենցաղային խնդիրները թույլ չեն տալիս վերջիններիս անգամ մտածել հանգիստը վայելելու մասին: Աշխատում են հագեցած գրաֆիկով, ոմանք անգամ երկու տեղ են աշխատում, ոմանք էլ պարզապես ամուսինների արտագնա աշխատանքի հետ կապված

միայնակ ցանկություն չունեն հաճախելու որևիցե ժամանցային վայր:

Պարզ է դառնում, որ երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրները ավելի շատ են, քան թվում է: Դրանք պարզապես շղթա են, որոնք պահանջում են համալիր միջոցառումներ: Եվ վստահաբար կարելի է ասել, որ այս ամենը իր հետևանքն է թողնում և թողնելու ամուսնա-ընտանեկան փոխհարաբերությունների կարգավորման և բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

Ինչ վերաբերվում է երիտասարդ գույգերի նախասիրություններին՝ կապված ազատ ժամանցի կազմակերպման հետ, երիտասարդները ցանկություն են հայտնել ժամանցային ակումբների, հիմնումը: Նրանց մեկնաբանմամբ այն հիանալի հնարավորություններ է ստեղծում լիցքաթափվելու և հետաքրքրությունների ընդլայնման համար:

Մաքս Կասյանը կարծում է, որ ժամանցը շատ ավելին է, քան պարզապես ազատ ժամանակը կամ վերականգնմանն ուղղված գործողությունների ցանկ: Ժամանցը պետք է ընկալվի որպես մշակույթի կենտրոնական տարր՝ խորը և բարդ կապեր ունենալով աշխատանքի, ընտանիքի և քաղաքականության ընդհանուր խնդիրների հետ: Ժամանցը բերրի հիմք է ամուսինների, երեխաների և ի վերջո, անձի հիմնարար կարիքների ստուգման համար: Հանգստի գործընթացում շատ ավելի հեշտ է ձևավորվել հարգալից վերաբերմունք իր նկատմամբ, նույնիսկ անձնական թերությունները կարող են հաղթահարվել ժամանցային գործունեության միջոցով: Հանգստի ժամերին սիրված գործողությունները աջակցում են հուզական առողջությանը: Լիարժեքության համար բոլորն էլ կարիք ունեն ժամանակ առ ժամանակ լիցքաթափվելու ու վայելելու կյանքը՝ իրացնելով իրենց նախասիրությունները: Այս ամենից պարզ է դառնում, որ համայնքները պետք է ստանան ֆինանսական օգնություն այն ծրագրերի համար, որոնք պատասխանատու կլինեն զարկ տալու ժամանցային վայրերի ստեղծմանը և գործելուն: Գյուղական երիտասարդության շրջանում իրականացված հարցման արդյունքում ակնհայտ է դառնում, որ երիտասարդների բացարձակ մեծամասնությունը իրենց խնդիրների լուծման հեռանկարը տեսնում են պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների աջակցության մեջ: Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները և դրա արդյունքների վրա հիմնվելով՝ առանձնացնենք մի քանի կարևոր եզրահանգում:

❖ Հարցվածների 32%-ն իր ազատ ժամանց հաճախելը կապել է ազատ ժամանցային վայրի բացակայության, իսկ 35%-ն նյութականի հետ:

❖ Հարցման համաձայն՝ հայ երիտասարդությունը առավելապես ձգտում է ավելացնել ազատ ժամանցը իր ընտանիքում, անձնական հարաբերություններում: Դրա համար անհրաժեշտ են դառնում երիտասարդական կենտրոնների, տարածությունների բացումը և այլն: Մա միայն վերաբերվում է ժամանցի մի ուղղությանը (օտдых), իսկ ինքնազարգացման համար պահանջները կանրադառնանք առանձին հոդվածում:

❖ Մի կողմից կայուն ֆինասներիր ցածր մակարդակ, ինչը հնարավորություն չի տալիս ժամանց կազմակերպել, մյուս կողմից աշխատանքային գերժանրաբեռնվածություն, կարելի է եզրակացնել որ, Հայաստանի Հանրապետությունում անգամ աշխատանքի գերժանրաբեռնվածությունը սոցիալ-տնտեսական կայունություն չի ապահովում: Իսկ սա լուրջ մտահոգություն է և պահանջում է պետության ակտիվ միջամտություն:

Սոցիոլոգիայի տեսանկյունից կարևորում ենք Հայաստանում ազատ ժամանցի կազմակերպման մակարդակի բարելավմանն ուղղված միջոցառումները, աշխատանքային պայմանների և ապրելաձևի բարելավումը, որոնք ոչ միայն կբարձրացնեն ՀՀ երիտասարդների օրվա գրաֆիկի կառուցումը և ազատ ժամանակի օպտիմալ կազմակերպումը, այլև կնպաստեն երկրի զարգացմանը: Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորման կարևորությանը, փորձագետները նշում են, որ առանց այդ աջակցության տեղական ՀԿ-ները, հանրային կառույցները շատ դեպքերում ունակ չէին լինի կյանքի կոչել գյուղական համայնքների երիտասարդությանն ուղղված ծրագրերը: Դժվար չէ նկատել, որ վերոնշյալ բոլոր դերակատարները (Համաշխարհային բանկը, Միավորված ազգերի կազմակերպությունը, աջակցության տեղական ՀԿ-ները, հանրային կառույցները), նշանակալի դեր ունեն գյուղական համայնքների երիտասարդության կյանքում, սակայն վերջիններիս կողմից ներկայումս տարվող աշխատանքները համակարգված չեն և խորքային ազդեցություն չեն ունենում երիտասարդության իրավիճակի բարելավման, գոյություն ունեցող բազմաբնույթ խնդիրների լուծման վրա: Ուստի ոլորտում ներդրվող յայնա-ծավալ ֆինասական ռեսուրսները արդյունավետ օգտագործելու, հասցեական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել ու դասակարգել գյուղական համայնքների երիտասարդության խնդիրները և առանձնացնել այն կոնկրետ գործողությունները, որոնք պետք է կյանքի կոչվեն առանձին դերակատարների կողմից [11, էջ 47]:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության նր ն շ ու մ., (29 հունվարի 2010 թվականի N 98-Ն) <https://www.arlis.am/>
2. **Акимова Л. А.** Социология досуга учебное пособие. - Моск. Гос. ин-т культуры и искусства, 2003.
3. **Шульга И. И.** Педагогическая анимацияновая профессия организатора досуга // Вестник СГУТиКД, 2011, №3
4. **Стеббинс Р. А.** Свободное время к оптимальному стилю досуга // Соц. исслед. - М. 2000.
5. Հայաստանի հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարություն., (2-րդ մաս) <http://www.irtek.am/>
6. **Бутенко И. А.** Качество свободного времени у богатых и бедных / Социологические исследования, 1998.
7. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Ժողովրդագրական տվյալների բազայի, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը ըստ սեռի և տարիքի տարեսկզբի դրությամբ:
8. **Караханова Т. М.** Работа, свободное время. - М. 1993.
9. **Безрукова О. Н.** Социология молодежи. Учебно-методическое пособие. Факультет социологии СПбГУ. - С.Петербург, 2004.
10. **Андреева А. А, Габдуллина Г. К.,** Досуг как фактор социализации современной молодежи. // Социология и общество: глобальные вызовы регионального развития. - М. 2012.
11. Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ ՀԿ, Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծություն/ - Եր.: 2015-2016:

Տճանա/Հանձնվել է՝ 20.11.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 27.11.2021

Принята/Ընդունվել է՝ 04.12.2021